«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՍՏ ԱՄԲԻՈՆԻ 2019-2024 ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

Համառոտ տեղեկատվություն ամբիոնի վերաբերյալ

Դասընթացներ

1.«Դեղագործության կազմանկերպում և էկոնոմիկա»
2.«Դեղաձևերի տեխնոլոգիա»
3.«Դեղաբանության հիմունքներ»
4. «Դեղաբանություն»
5. «Ֆարմակոլոգիա»
6. «Դեղագործական քիմիա»
7. «Բժշկական դեղագործական ապրանքագիտություն»
8. «Բուսաբանության հիմունքներ»
9. «Դեղագործության մարկետինգի և մենեջմենթի հիմունքներ»

Ամբիոնում ներգրավված դասընթացները ուսուցանվում են միայն միջին մասնագիտական կրթության **0916.01.5 «Դեղագործություն»** մասնագիտության **0916.01.01.5 «Դեղագործ»** որակավորման հիմնական կրթական ծրագրով:

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան մասնագետներով և 2021-2022 ուստարում ունեցել է թվով 4 աշխատակից և 2 համատեղող:

Դասախոսական կազմի միջին տարիքը՝ 30 տարեկան:

2021-2022 ուստարում ամբիոնի աշխատանքների ուսումնական ծավալը կազմել է 1386 ժամ:

Դասախոսների կողմից ուսումնական ծանրաբեռնվածությունը կատարվել է 1386 ժամ:

«Դեղագիտական առարկաների» ամբիոնի դասախոսական կազմում այլ փոփոխություններ չեն եղել:

Ամբիոնի ուսումնամեթոդական ռեսուրսները

«Դեղագիտական առարկաների» ամբիոնի առարկաները դասավանդվում են Քոլեջի հատուկ կահավորված լսարանում, կաբինետում որոնք ապահովված են անհրաժեշտ սարքավորումներով, դիդակտիկ նյութերով, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին ուսուցանել մասնագիտական առարկաները:

Ուսումնական և դեղատնային բազաների հետ գործող պայմանագրերի շրջանակներում կազմակերպվել և անցկացվել են ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաները:

Ուսուցման մեթոդները ամբիոնում

- Դասախոսություններ, գործնական պարապմունքներ:
- Բանավոր հարցումներ և ինքնուրույն աշխատանքներ:
- Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ (տեսանյութերի ցուցադրում, իրավիճակային խնդիրների լուծում, կլինիկական դեպքերի վերլուծություն, խմբային մեթոդ, խաղեր, հարց ու պատասխան և այլն):
- Միջանկյալ ստուգումներ, ստուգարքներ, քննություններ, ինքնուրույն և գործնական պարամունքներ:

ՈՒՍՈՒՄԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1. Ամբիոնի նիստերի կազմակերպում և անցկացում:

«Դեղագիտական առարկաների» ամբիոնը համաձայն պլանի կազմակերպել և անցկացրել է թվով 5 նիստ, որտեղ քննարկվել են ուսումնական, դաստիարակչական և կազմակերպչական հարցեր:

(Հիմք՝ ամբիոնի նիստերի արձանագրություններ):

Գործողություն 2. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում:

Ամբիոնը 2021-2022 ուստարվա ընթացքում իրականացրել է պլանավորված աշխատանքների համակարգում, որի արդյունքում հաշվետու ժամանակահատվածում պլանով նախատեսված աշխատանքները հիմնականում իրականացված է:

Կազմվել են դասալսումների, հերթապահության, միջանկյալ ստուգարքների և քննությունների ժամանակացույց: Վերը նշված փաստաթղթերի շրջանակներում կատարվել է ամբիոնի աշխատանքների պլանավորում և համակարգում: 2021-2022 ուստարում պլանավորվել և կազմակերպվել են ամբիոնում դասավանդվող առարկաների միջանկյալ և ավարտական քննությունները՝ նախապես վերանայելով հարցաշարերը, թեստերը և քննական տոմսերը: 2021-2022 ուստարում «Դեղաբանություն» առարկան ընդգրկվել պետական ավարտանան քննությունների ցանկում, որի համար նախապես կազմվել են համապատասխան հարցաշարը և քննական տոմսերը:

Գործողություն 3. Մասնակցություն Քոլեջի մանկավարժական խորհրդի նիստերին:

Հաշվետու ժամանակահատվածում «Դեղագիտական առարկաների» ամբիոնը 2021-2022 ուստարում մասնակցել է Քոլեջի Մանկավարժական խորհրդի թվով 6 նիստերին:

(Հիմք՝ Մանկավարժական խորհրդի նիստերի արձանագրություններ):

Գործողություն 4. Փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում:

2021-2022 ուստարվա ընթացքում ամբիոնում դասավանդվող դասընթացներից իրականացվել են պլանավորված 4 և 3 ոչ պլանավորված դասալսում: Դասալսումները իրականացվել են, առանձնացնելով դասապրոցեսում ծագող խնդիրներն ու թերությունները՝ որոնք քննարկվել են ամբիոնի դասախոսների հետ: Քննարկումների ընթացքում յուրաքանչյուր դասախոս առաջարկել է իր մոտեցումները առկա խնդիրները լուծելու նպատակով: Կարևորելով նոր գիտելիքների ձեռքբերումն ու ամրապնդումը՝ պարբերաբար վերանայվել է դասավանդման մեթոդիկան, յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ ցուցաբերվել է անհատական մոտեցում՝ գիտելիքի յուրացման առանձնահատկություններից ելնելով:

(Հիմք՝ ամբիոնի №6 նիստի արձանագրություն):

Գործողություն 5. Առարկայական դասընթացների վերաբերյալ նյութերի բազայի արդիականացում և համալրում

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի դասախոսների կողմից իրականացվել է ամբիոնում դասավանդվող առարկայական դասընթացների տեսական և գործնական նյութերի արդիականացում և համալրում:

(Հիմք՝ ամբիոնի առարկայական դասընթացների ծրագրեր):

Գործողություն 6. Ամբիոնի ուսումնական աշխատանքների ծավալի, ծանրաբեռնվածության հաշվարկների կազմում:

2021-2022 ուստարում ամբիոնին հատկացվել է 1386 ժամ, ուստարվա ավարտին այն կատարվել է 100 %-ով (1386 ժամ):

(Հիմք՝ ամբիոնի բեռնվածության թերթիկ):

Գործողություն 7. Ուսանողների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում և իրականացում:

2021-2022 ուստարվա ընթացքում իրականացվել է հանդիպումներ, քննարկումներ, որտեղ լսվել են ուսումնադաստիարակչական հարցեր:

Գործողություն 8. Ամբիոնին անհրաժեշտ ուսումնական փաստաթղթերով ապահովում:

2021-2022 ուստարվա մեկնարկով պայմանավորված, 2021թ. օգոստոսի 23-ի դրությամբ, ուսումնական մասի կողմից ամբիոնին է տրամադրվել ուսումնական գործընթացն ապահովելու նպատակով անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (ուսումնական, պլան, դասացուցակ, դասամատյաններ, ուսանողական տոմսեր և այլն):

Գործողություն 9. Գիտելիքների ստուգումների անցկացում (միջանկյալ և ամփոփիչ)

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնում կազմակերպվել է՝

- 34 միջանկյալ քննություններ և ստուգարքներ
- 2 պետական ամփոփիչ քննություններ

Գործողություն 10. Խորհրդատվությունների տրամադրման աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողներին անհրաժեշտ խորհրդատվություն տամադրել է ըստ անհրաժեշտության:

Գործողություն 11. Ձմեռային և ամառային քննաշրջանի, լուծարքների կազմակերպչական աշխատանքներ:

2021-2022 ուստարվա ընթացքում ամբիոնի կողմից համաձայն ուսումնական մասի կողմից ներկայացված ժամանակացույցի ամբողջությամբ և ժամանակին իրականացվել է ձմեռային և ամառային քննաշրջանի և լուծարքների կազմակերպման աշխատանքները:

Գործողություն 12. Մասնակցություն ներքոլեջային ՈԱ միջոցառումներին:

Ամբիոնի վարիչի գլխավորությամբ ամբիոնը ակտիվ մասնակցում է Քոլեջում իրականացվող բարեփոխումներին: Քոլեջի ՈԱ պատասխանատուի կողմից հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 2 սեմինար խորհրդակցություններ, որտեղ լսվել են Քոլեջում ինստիտուցիոնալ հավատարմագրմանն առնչվող հարցեր:

Գործողություն 14. Գիտական, հետազոտական աշխատանքների պլանավորում և կազմակերպում:

Ամբիոնի յուրաքանչյուր դասախոս, կարող է ընտրել և իրականացնել համապատասխան հետազոտական թեմա, ելնելով քոլեջի առկա խնդիրներից, իր մասնագիտական առանձնահատկություններից, կողմնորոշումից և հավակնություններից: Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում Քոլեջում ներդրվել է ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու քաղաքականությունը: Նախատեսվում է 2022-2023 ուստարվա շրջանավարտների կողմից կներկայացվեն ավարտական աշխատանքներ, առնվազն 4 աշխատանք:

Գործողություն 15. Մասնագիտական պրակտիկաների անցկացում:

2021-2022 ուստարվա ընթացքում ամբիոնի կողմից համաձայն ուսումնական պլանի կազմակերպվել է՝

3 ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման, որին մասնակցել են 65 ուսանող

1 նախավարտական արտադրական պրակտիկա, որին մասնակցել են՝ 39 ուսանող

Ամփոփում

Ի տարբերություն նախորդ տարիների հաշվետու ուսումնական տարում Քոլեջում իրականացվել են ծավալուն աշխատանքներ, մասնավորապես՝

1. Իրականացվել են վերանորգման աշխատանքներ:
2. Ձեռք են բերվել անհրաժեշտ կահույք և սարքավորումներ:
3. Ստեղծվել է համակարգչային լսարանը:
4. Ներդրվել է ամբողջովին նոր ձևաչափի առարկայական/մոդուլային ծրագրեր:
5. Մշակվել և ներդրվել է ՄԿԾ-ի նոր ձևաչափի ամբողջական փաթեթը:
6. Մշակվել և ներդրվել է պրակտիկաների թղտապանակը (պորտֆոլիո):
7. Արդիականացվել և համալրվել են դիդակտիկ թեմատիկ բնույթի նյութերը:

«Դեղագիտական առարկաների»

ամբիոնի վարիչ _____ Սեդա Կեսոյան